№ 174 ՈՒՐԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25 **1898** ՈՒՐԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25 № 174

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվան 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

«Մշակի» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 բուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 բ., ինն և ութ ամսվանը՝ 8 բ., եօթ ամսվանը՝ 7 բ., վեց ամսվանը՝ 6 բ., հինգ ամսվանը՝ 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը՝ 2 բ., մի ամսվանը 1 բուբլի։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը (Բազարնայա և Բարօնսկայա փողոցն. անկիւն)։

Ուրիշ քաղաքներից պէտք է դիմել այս հասցէով. ТИФЛИСЪ, редакція «Мшакъ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «Mschak».

Սեպտեմբերի 27-ին, կիրակի օրը, Խօջիվանքի գերեզմանատան եկեղեցում, ժամը 11-ին կը կատարվի պատարագ, որից յետոյ, ժամը 12½-ին, կը կայանայ հանգուցեալ

ՐԱՖՖԻԻ

գերեզմանի վրա հոգեհանդիստ և նրա մահարձանի բացումը։ 2—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ցարգանք չէ այլ ցուցամոլութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կոմս Լեվ Տօլստոյի եօթանասնամեակը. Նամակ Երևանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լուրեր Թուրքայ Հայաստանից. Դանիայի Լուիզա թագուհին. Տխուր պատկեր. Նամակ Թիւրքիայից. Նամակ Ամերիկայից. Արտաքին լուրեր. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գեղջկուհին։

ՑԱՐԳԱՆՔ ՉԷ ԱՅԼ ՑՈՒՑԱՄՈԼՈՒԹԻՒՆ

—

Ամեն անգամ, երբ Թիֆլիսում ներկայ ենք լինում որ և է թաղման, մեզ վրա աննկարագրելի ծանր տպաւորութիւն է թողնում այն փաստը, որ հանգուցեալի վրա դրվող պսակներն այլ ևս հասարակական գնահատութիւն և յարգանքի արտայայտութիւն չեն, այլ լոկ շռայլութիւն, ցուցամոլութիւն... Հանգուցեալին կարելի է և պէտք է յարգել, բայց նրա դիակը դարձնել ցուցամոլութեան և անմիտ շռայլութեան առարկայ՝ ներելի չէ ոչ եկեղեցու պարզասիրութեան և ոչ էլ քրիստոնէական համեստութեան տեսակէտից։

Այդ տգեղ սովորութիւնը, պէտք է խոստովանենք, Թիֆլիսում սաստիկ տարածվեց մանաւանդ 1892 թ-ից, այն է՝ Գրիգոր Արծրունու մահվանից յետոյ, որի դագաղի վրա հասարակական բռնկված զգացմունքները թափեցին իրանց ամբողջ ոյժը՝ հասցնելով պսակների թիւը մօտ 400-ի։ Եւ նրանից յետոյ՝ ինչքան էլ պըսակները շատ են լինում որ և է հանգուցեալի վրա, այնու ամենայնիւ նրանք չափից դուրս քիչ են երևում։ Ահա՛ այս պատճառով հանգուցեալի տէրերը և ազգականները՝ մոռանալով, որ պսակը մեծ մասամբ հասարակական յարգանքի արտայայտութիւն պիտի լինի, ոչինչ փող չեն խնայում՝ որքան կարելի է շատ օգուտներ տալու պսակավաճառ խանութներին և այգիներին, չը յիշելով որ՝ այլ բան է հասարակական գործողը և այլ՝ մասնաւոր մարդը...

Եւ ահա՛ իբրև հետևանք այդ անմիտ սովորութեան, մենք շատ անգամ վկայ ենք լինում այսպիսի տեսարանի. մեռնում է մի անյայտ, հասարակական տեսակէտից ոչինչ նշանակութիւն չունեցող մի հարուստ վաճառական. նրա դագաղի վրա դրվում են պսակներ, թւով քսան, երեսուն, երբեմն էլ աւելի։ Բայց ո՞վքեր են այդ պսակներ դնողները։ Մի՞թէ զանազան խմբեր, հիմնարկութիւններ, կամ նրանից բարերարված ուսանողներ, ընտանիքներ։ Ո՛չ մէկը և ոչ միւսը։ Այդքան պսակներ դնողները նրա ընտանիքը և ազգականներն են, և որովհետև, ինչպէս յայտնի է, ամեն մի քրիստոնեայ մի այն մի ընտանիք ունի, այդ պատճառով տեսնում ենք՝ կինը առանձին պսակ է դնում, տղան առանձին, մարդու գնացած աղջիկն առանձին. առանձին պսակ քրոջից և եղբայրներից, առանձին պսակներ հօրեղբօր որդկերանցից և հօրաքրոջ որդկերանցից, և այդպէս անվերջ ու անվախճան...

Բայց մի՞թէ դա անկեղծ յարգանք է, որը երբէք չէ սիրում ցուցամոլութիւններ անել և շռայլութեան տակ վարագուրվել։ Մինչև այժմ հանգուցեալի տէրերը, մոռացած իրանց կոկիծը, այս ու այն կողմ էին ընկնում բազմաթիւ քահանաներ և վարդապետներ հրաւիրելու, իսկ այժմ դըրան աւելացել է և բազմաթիւ պսակներ դնելու ախտը, որը, տարաբախտաբար, յուզարկաւորող և ականատես ժողովրդի վրա զարմանք չի ազդում, այլ լոկ ժպիտ է շարժում...

Ներելի չէ մարդկային քնքոյշ զգացմունքները և հանգուցեալի մարմինը շռայլութեան և դատարկ ցուցամոլութեան առարկայ դարձնել, և այդ պատճառով ցանկալի է՝ օր առաջ հրաժարվել այդ տգեղ սովորութիւնից։ Անկեղծութիւնը և համեստութիւնը ո՛չ մի տեղ գուցէ այնքան յարգելի չէ, որքան մեռածի դիակի առաջ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՄՍ ԼԵՎ ՏՕԼՍՏՕՅԻ ԵՕԹԱՆԱՍՆԱՄԵԱԿԸ

II

Այդ անմոռան, առաջնակարգ գործից համարեա տասն տարի յետոյ կոմս Տօլստոյ լոյս հանեց իր երկրորդ մեծ վէպը, որի վերնագիրն է «Աննա Կարենինա» («Анна Каренина»)։ Նոր աշխատութեան մէջ էլ ամբողջ ոյժով երևան եկաւ գեղարուեստական այն խոշոր տաղանդը, որ հրաշակերտել էր «Պատերազմ և Խաղաղութիւնը»։ Բայց Տօլստոյի անունն անմահացնողը «Աննա Կարենինան» չէ։ Այստեղ վիպագրողը աւելի պարզ է ցոյց տուել, թէ ինչ խոշոր փոփոխութիւն է տեղի ունենում իր հոգու մէջ։ Սկզբից ևեթ Տօլստոյ մի հեղինակ էր, որ անողոքմ վերլուծութեան է ենթարկում կեանքը. նա չէ բաւականանում այդ վերլուծութիւնը գեղարուեստական ձևերի մէջ ամփոփելով, այլ և ուզում է առաջնորդել մարդկանց, ցոյց տալ թէ ուր պէտք է գնալ, ինչի մէջ է փրկութիւնը։ Ռուս խոշոր տաղանդներից շատերին յատուկ է այսպիսի մի կերպարանափոխութիւն. սկզբում ծառայել առաջաւոր փայլուն դաղափարներին, բայց յետոյ կամ գլորվել մռայլ միստիքականութեան մէջ կամ ծառայել ռէակցիային, խաւար հոսանքներին։ Այսպէս են եղել Գոգոլ, Դոնչարով, Դոստոեվսկի։ Կոմս Տօլստոյ, որ քառասնական թւականների գրական փայլուն համաստեղութեան խոշոր լուսատուներից մէկին էր, ազատ չը մնաց

ծելու։ Երբ Սօնայի նշանադրութեան մասին էլ լսեց, աւելի ևս կատաղեց։ Նա ճանաչում էր Ասլանին. նրա մօտիկ ծանօթներից էր, գոնէ առ երեսս այդպէս էր ցոյց տալիս. իրար հետ շատ անգամ էին հանաքներ անում։ Մի անգամ էլ, երբ Ասլանը իր հօրեղբօր որդի Բէհրամ-բէկի հետ կանգնած՝ Ք... գիւղի երիտասարդների հետ խօսում էին, Սարգիսը, յանկարծ խօսակցութիւնը ընդհատելով, դիմեց Ասլանին ու ասաց.

—Մեր տղայ, ամմա լաւ հարմացու ունիս հա։

Ասլանը միայն ժպտաց։

—Բայց գիտես, հեղնօրէն շարունակեց Սարգիսը, մեծ օժիտ կայ վրան։

—Ի՞նչ է, զարմացմամբ հարցրին ամեն կողմից։

—Տղայ կամ աղջիկ, ժպտալով ասաց Սարգիսը. «էսօր էգուցն է ընկելը։ *)

Ասլանի աչքերը սևացան, արիւնը գլխին խփեց. ձեռքը խանչալին տանելն ու պսպղալը մէկ եղաւ։ Եթէ Բէհրամը չը լինէր, որը իսկոյն բռնեց նրա ձեռքից, Սարգսի գլուխը կը թռչէր։ Միւս երիտասարդներն էլ վրա թափվեցին ու մի կերպ հանգստացրին։ Իսկ Սարգիսը վազուց էր փախել։

Ասլանը մի քանի բօպէ լուռ կացաւ. գժուածի պէս աչքերը դէս ու դէն էր շրջում և յանկարծ սկսեց երեխայի պէս հեկեկալ։ Քիչ էր մնում, որ կատաղութիւնից պայթէր։ Բէհրամն էր, որ աշխատում էր հանգստացնել՝ նրա վարմունքը երեխայութիւն համարելով, և համոզել, որ գնան գիւղ։

—Սարգիսն ինչ մարդ է, որ նրա խօսքին ուշք ես դարձնում, ճանապարհին ասում էր Բէհրամը։

—Չէ, մտնչում էր Ասլանը, ես պէտք է նրան սպանեմ։

—Նրան սպանելով ինչ օգուտ կունենաս. չէ՞ որ միւսներն էլ կարող են նոյնը ասել... Մի մոռացիր, որ դա ճշմարտութիւն է... Աւելի լաւ է մեղաւորին սպանես, որ նախատինքից

*) Ծննդեան ժամանակը մօտեցել է։

ազատվենք, ասաց ցածր ձայնով Բէհրամը։

—Ո՞վ է մեղաւորը։

—Սօնան, կտրական կերպով ասաց Բէհրամը։

—Նա ինչով է մեղաւոր։

—Նրանով, որ նա Սարգսին է սիրում, և, ինչպէս ես հաստատ տեղեկացել եմ, նրա հետ է...

—Սուտ է, նա ոչ ոքին չէ՛ սիրում, եթէ նա ուրիշին սիրէ, մաս-մաս կանեմ նրան։

—Քանի որ ես հաստատ գիտեմ, ուրեմն ճիշդ է։

Ասլանը շանթահարի պէս մնաց կանգնած։ Հաւատար իր ականջներին. այդպիսի բան կարող էր պատահել. Սօնան ուրիշին սիրէ, նա՝ որի համար կեանքն էլ չէր խնայի, որին իր կեանքում ամենից շատ է սիրում. Սօնան այդ ամենի փոխարէն դաւաճանէ իրան, ուրիշի մօտ նախատինքի առարկայ դարձնէ։ Էլ ինչ սրտով պէտք է շրջէ գիւղում, չէ՞ որ ամենքը կը լսեն այդ և այն ժամանակ... Ո՛հ, աւելի լաւ է մեզանից մէկը չը լինի, քան թէ այս բոլորը լսեմ, մտածում էր Ասլանը։ Լաւ, Սօնա, տեսնենք ինչպէս կը սիրես քո Սարգսին։

Ասլանը այլ ևս հանգստութիւն չունէր... Մարդը դաղան էր դարձել. մէկին պէտք է ոչնչացնէր, որ ինքն ապրէր։

—

Ասլանը հասաւ տուն. նա լուռ էր, բայց կատաղած. ծառաներից ով դիմում էր նրան մի որ և իցէ հարցով, քիչ էր մնում, որ ծեծվի։ Երկիւղից ամեն մէկը մի կողմ փախաւ, մէկն էլ գնաց Ասլանի հօրեղբօր՝ Սարգիս-բէկի տուն ու եղելութիւնը պատմեց։ Վերջինը, թէև Ասլանի հօրեղբայրն էր ու երեսանց բարեկամ էր ձևանում, բայց ներքուստ նրա ամենակատաղի թշնամիներից մէկն էր, նա ուզում էր իր կալուածներին սահմանակից արօտատեղին ձեռք գցել, բայց Ասլանը չէր տալիս։ Երբ Սարգիս-բէկը դուրս եկաւ տնից և ուղևորվեց դէպի Ասլանի տուն, պատահեց Բէհրամին՝ իր եղբօր որդուն։

—Ո՞ւր ես գնում, ամի, դիմեց Բէհրամը Սարգիս-բէկին։

—Ասլանի մօտ. ասում են հիւանդ է։

—Ո՛չ թէ հիւանդ, այլ կատաղած է, և պատմեց Ք... գիւղում պատահած դէպքը։

—Ի՞նչ է կպել այդ լրբին, մեզ էլ է խայտառակում, իրան էլ. ամբողջ աշխարհքում առակ դարձանք էլի։

—Ես էլ եմ համոզել, որ մի կերպ ձեռք վերցնէ, տեսնենք աջողվում է. դու էլ համոզիր, թէ չէ գիւղացիներից չենք պրծնի...

Այսպէս խօսակցելով Սարգիս-բէկն ու Բէհրամը մտան Ասլանի մօտ։

—Բարի երեկոյ, Ասլան։

Ասլանն առանց պատասխանելու տեղից վեր կացաւ։

—Ի՞նչ է, հիւանդ ես, հարցրեց Սարգիս-բէկը։

—Ո՛չ, հազիւ լսելի ձայնով պատասխանեց Ասլանը. նստեցէք։

—Բա ինչ է պատահել, ինչու ես յօնքերդ կիտել. չը լինի՞ թէ սիրող հարս է ուզում. ուզում ես այնպէս նշանած դառնեմ, որ բոլորն էլ նախանձեն քեզ։

—Աղքատներից մէկի հետ նշանվեցի ինչ դառաւ, որ այժմ էլ անուանի տեղից ուզեմ։

—Էլի դու նրանից ձեռք չես վերցրել, ախր նա քո ինչ լայաղ է. դուրս ընկածների մէկը ուզում ես բերել, որ քո անունդ էլ խայտառակես, մերն էլ։ Դու գիտես, որդի, մեղքը քո վիզը, որ օրը նա եկաւ քո տուն, մեր ուրը քո չէմքից կը կորվի։ Լաւ մտածիր, նեղ օրում մենք ենք հարկաւոր, թէ կինը։

—Ի՞նչպէս անեմ։

—Ձեռք վերցրու։

—Ի՞նչպէս ձեռք վերցնեմ, քանի որ իմ մեղքս է, ես եմ մեղաւորը։

—Ո՞վ ասաց, որ նա մեղաւոր չէ. եթէ նա նամուսով աղջիկ լինէր, մի՞թէ այդպիսի մեղք կը գործէր։

—Ձիշդ է, աւելացրեց Բէհրամը. անցեալ օրը Ք... գիւղացի մէկը պատմում էր որ նա Մուսա-քեօխվի տղի հետ անտառից դուրս եկաւ։

այդ կերպարանափոխութիւնից: Նրան տանջող հարցերը տարան նրան կրօնական-միստիկական, աստուածաբանական մտածողութիւնների աշխարհը: Վիպագրողը ձեռք առաւ քարոզչի գաւազանը: Ահա այդ փոփոխութիւնը, որի առաջին, թոյլ նշանները երևում են «Պատերազմ և Խաղաղութիւն» վէպի մէջ, աւելի պարզ ու որոշ կերպով պատկերացրեց «Անտա Կարենինա» վէպը: Այնուհետև Տօլստոյ մեծ վէպեր չը ստեղծագործեց: Հետևելով իր բռնած թէք ուղղութեան, նա շատ շուտով հասաւ ծայրայեղ սկեպտիցիզմի, սկսեց մերժել ամէն ինչ, մինչև իսկ գրականութեան և գիտութեան օգուտը ժողովրդի համար: Շոպէնհաուէր իր մռայլ, պեսիմիստ փիլիսոփայութեամբ գերեց այդ հանճարեղ հոգին: Դեռ 1869 թվին նա գրում էր. «Զը գիտեմ, երբ և իցէ կը փոխեմ կարծիքս, բայց այժմ ես համոզված եմ, որ Շոպէնհաուէր ամենահանճարեղն է մարդկանց մէջ... Դա ամբողջ աշխարհն է անհաւատալի պարզ և գեղեցիկ արտայայտութեան մէջ»: Իր «Խոստովանութեան» մէջ Տօլստոյ ասում է որ ամուսնանալուց յետոյ նա սկսեց հասկանալ որ գրականութիւնը ոչ թէ օգտակար չէ, այլ նոյն իսկ վնասակար: «Զը նայած, որ գրելը ես դատարկ բան էի համարում այդ տասն տարիների ընթացքում, ես այնու ամենայնիւ շարունակում էի գրել»: Եւ այդ հակասութիւնը նա բացատրում է նրանով, որ «ինչին աշխատանքի» համար ահագին դրամական վարձատրութիւն էր ստանում և ծափահարութիւնների էր արժանանում:

Սակայն յուռեռութիւնը կամ Տօլստոյին չը գցեց անշարժութեան և անգործունէութեան անդունդը: Ամեն ինչ ժխտելով, նա մի բան մեծարեց—ժողովուրդը. հասարակ ժողովրդի կեանքը իդէալ ընդունելով, նա իր բոլոր ոյժերով նուիրվեց նրան: Ահա ինչ էր գրում նա 1885-ին. «Աւելի քան երեսուն տարի առաջ, երբ այժմեան մի քանի գրողները, որոնց թւում և ես, դեռ նոր էին սկսում գործել, Ռուսաստանի հարիւր միլիոն ազգաբնակութեան մէջ գրագէտների թիւը տասնեակ հազարներով էր հաշվում, այժմ, գիւղական և քաղաքային դպրոցների բազմանալուց յետոյ, գրագէտների թիւը, երևի, միլիոնների է հասնում: Եւ գրագէտ ռուսների այդ միլիոնները կանգնած են մեր առաջ, ինչպէս սոված կաչաղակներ, բաց բերաններով, և ասում են մեզ.—Պարոններ, մեր հայրենի գրողներ, գցեցէք մեր այս բերանները ձեզ և մեզ արժանի մատաղ կերակուր. գրեցէք մեզ համար, որ ծարաւ ենք կենդանի դրական խօսքին... «Հասարակ և ազնիւ ռուս ժողովուրդը արժանի է, որ մենք պատասխանենք նրա բարի և արդար հոգու հրաւէրին: Ես այդ ժամին շատ եմ մտածել և վճռեցի, ոյժերիս նեղածին չափ փորձեր կատարել այդ ասպարէզում»: Եւ նա, իրաւ, գրեց մի շարք վէպիկներ և պատմուածքներ ժողովրդական ընթերցանութեան համար: Բայց այդ ճիւղի մէջ մեծ աջողութիւն չունեցաւ. միստիկական-բարոյախօսական ուղղութիւնը խեղդում էր ստեղծագործութեան հոգին:

Թէև գրելը նա համարում էր դատարկ բան, բայց շարունակեց գրել: Եւ ռուս գրականութեան համար մեծ բախտ է, որ նա չը հետևեց ժխտողական ուղղութեան, դէն չը գցեց իր գրիչը: Այդ ժամանակներից յետոյ նա տվել է մի շարք վէպիկներ: Որքան և դրանց մէջ Տօլստոյ հաւատարիմ մնար իր վարդապետութիւններին, որքան էլ նա քարոզչութիւն ժողովեր իր գրուածքների մէջ, վերջիններս, այնու ամենայնիւ, գեղարուեստական մի-մի գոհարներ են, որոնք յափշտակում են ընթերցողներին, որոնք ահագին աղմուկ և իրարանցում են տարածում համաշխարհային գրականութեան մէջ: Այսպէս էին նրա հռչակաւոր «Խաւարի իշխանութիւնը» (Власть тьмы), «Կրէյցերեան Սոնատը» («Крейцерова Соната), «Տէրն ու Բանուորը» («Хозяинъ и Работникъ») և այլն: Տօլստոյի իւրաքանչիւր նոր գործը աշխարհի բոլոր անկիւններում աղմուկ է յարուցանում. և պատճառն այն է, որ նա ինքնուրոյն մտածող է, համարձակ, ուժեղ, դիւթող իր ահագին տաղանդով: Մեծ արուեստագէտի հմտութեամբ նա բռնում է կեանքի անճոռնի պալարները, հանում է հասարակութեան առաջ և ափշեցնում է ամենքին: Դեռ յիսունական թուականներին նա գրում էր. «Իմ վէպի հերոսը, որին ես սիրում եմ հոգուս բոլոր ոյժերով, որին աշխատեցի դուրս բերել իր ամբողջ գեղեցկութեան մէջ և որ միշտ եղել է և կը լինի գեղեցիկ—ճշմարտութիւնն է»: Այդ խօսքերի մէջ հանճարեղ նկարն շատ գեղեցիկ կերպով բացատրել է իր համաշխարհային տիրապետութեան գաղտնիքը: Տօլստոյ իր մի հատ պարզ, անպահանջ ճշմարտութեամբ կարող է այնպիսի փոթորիկ յարուցանել մարդկութեան մէջ, որ մի պատմական, խոշոր երևոյթ կը դառնայ, ոչինչ պակաս քաղաքական ցնցող դէպքերից... Լ.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Սեպտեմբերի 20-ին

Սեպտեմբերը մօտենում է իր վախճանին. ուրիշ դպրոցներում արդէն կանոնաւոր դասերն սկսվել են, բայց թեմական դպրոցը դեռ ևս ամառային տենդի մէջ է: Թեմական դպրոցը մի քրոնիկական հիւանդութիւն ունի, որին ենթարկվում է ամեն տարի. այդ այն է՝ որ մեր հոգաբարձունները մեծ մասամբ լինելով վաճառականներ, յուլիս և օգոստոս ամիսներում իրանց «խրիզին» են գնում և սեպտեմբերին վերադառնալով՝ նոր միայն ձեռնարկում են ուսուցչական խումբ կազմելուն: Շատ հասկանալի է, որ խելքը գլխին մարդիկ մինչև այդ ժամանակ իրանց տեղերը գտած վերջացած են լինում, հետևապէս մեր թեմական դպրոցին մնում է, ինչպէս ասում են՝ «տականքը»: Եւ եթէ սրա վրա աւելացնենք այն հանգամանքը, որ շնորհիւ վերջին տարիների բազմաթիւ անախորժ դէպքերի և անկանոնութիւնների, դպրոցի վարկն ընկաւ, այնպէս որ շատ շատերը խորշում են նոյն իսկ տեսչի պաշտօնն ստանձնել,—միանգամայն հասկանալի է դառնում, թէ ինչու հոգաբարձութիւնը տեսուչ չը կարողացաւ հրաւիրել և տեսչի պաշտօնը յանձնեց նախկին ուսուցիչ Ս. Տէր-Գաբրիէլեանին. բայց ինչու պ. Տէր-Գաբրիէլեանին տեսուչ չեն անուանում, այլ տեսչի պաշտօնակատար: Եթէ դիմէք անձամբ հոգաբարձուներին և հարցնէք պատճառը, պատասխանը կը ստանաք՝ «անճարը կերել է բանջարը»: Ակամայից պաշտօնը յանձնելով, հոգաբարձունները որոշեցին գտնել տեսչի անունը ազատ պահել... Տեսչի խնդիրը այսպէս որոշելուց յետոյ, ուսուցիչների վերաբերմամբ էլ մի առանձին գործ չը տեսան հոգաբարձունները: Ճիշդ է, մի երկու նոր ուսուցիչներ հրաւիրեցին, բայց եթէ համեմատելու լինենք արձակվածների հետ, չը հրաւիրելը խելացիութիւն պէտք է համարենք: Իսկ և իցէ, այսպիսի բաներ միշտ կատարվել են, և երևի այս հոգաբարձութեան օրով շատ կը կատարվեն. մենք, երևանցիներս, ընտելացել ենք տարօրինակ բաների և չենք էլ զարմանում եղածների վրա: Ֆ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Արևելք» լրագրի մէջ գրում են հետևեալ ուրախալի լուրը. «Փաստաբան Աւետիս Սուրէնեան նամակ մը ուղղած է Պատրիարք Հօր, յայտնելով թէ որոշած է՝ իբր հայ անհատ մը՝ Շէրիի դատարանին առջև դատ բանալ Գարակէօղեան ժառանգորդներուն դէմ, հատատելու համար հանգուցեալ Տիգրան Գարակէօղեանի կտակին օրինաւորութիւնը: Սուրէնեան բողոքելով Ազգային Վարչութեան և Գարակէօղեան ժառանգորդներուն միջև գոյացած 20,000 ոսկի իրաւախոհութեան դէմ, կը հրաւիրէ Պատրիարքը՝ Գարակէօղեան ժառանգորդներուն չյանձնել կտակագիրը, որ, ըստ իրան, դատին մէջ գործածուելիք ամենէն հզօր փաստը կամ փաստերէն մէկը պիտի ըլլայ: Ի վերջոյ Սուրէնեան կը յայտարարէ, որ, եթէ մինչև հինգ օր Ազգային Պատրիարքարանի կողմէ պաշտօնապէս ծանուցուի լրագիրներուն միջոցաւ, թէ կտակագիրը կը մնայ Պատրիարքարանի մէջ և թէ իրաւախոհութիւնը մերժուած է, ինք ետ պիտի կենայ դատի ձեռնարկելէ»:

—

Լսում ենք, որ պրոֆէսոր Դօկուչայեվ վաղը, շաբաթ օր, սեպտեմբերի 25-ին, կարդալու է մի այլ դասախօսութիւն Թիֆլիսի գինուորական շտաբի շինութեան մէջ, աշխարհագրական ընկերութեան Կովկասեան բաժնի նիստում: Ներկայ կարող են լինել և կողմնակի հետաքրքրվողներ:

—

Թիֆլիսի քաղաքային դուման իր վերջին նիստում նորից հաստատեց իր նախկին որոշումը ձիաքաշը յետ գնելու մասին. իսկ ինչ վերաբերում է մասնաւոր առևտրական ընկերութիւնների կողմից արված առաջարկութիւններին, դրանց քննութիւնը կը յետաձգվի: Քաղաքային դումայի տրամադրութիւնն այն է, որ ձիաքաշը յետ գնվի և նրանից անկախ քննվեն զանազան առաջարկութիւններ:

—

«Казбекъ» լրագիրը հաղորդելով՝ որ օսերի ծընական-եկեղեցական դպրոցներում մայրենի լեզուի դասաւանդութիւնն արտաքսված է, սատիկ բողոքում է դրա դէմ: «Եւ վանկավարժութիւնը, և մանկավարժական փորձը—ասում է լրագիրը—ապացուցանում են, որ առանց մայրենի լեզուի անհնարին է առաջ տանել կրթութեան գործը: Բացի դրանից, սրբազան սինոդը պարտաւորացրել է աւանդել դպրոցներում մայրենի լեզուն: Անհրաժեշտ է գնալ սինոդի ցոյց տուած ճանապարհով, այլապէս այն չարիքը, որի դէմ բողոքում են այժմ ուսուցիչները, այն է ուսանող սերնդի խմբովին բթանալը, կարող է մեծ ծաւալ ստանալ»:

—

Կ. Պոլսի հայոց լրագրները հաղորդում են հետևեալը. «Աւստրիական դեսպան պ. Քալիչէ հեռագրով շնորհակալութիւն յայտնած է Պատրիարք Հօր, Աւստրիոյ Կայսրուհիին մահուան առթիւ անձամբ Պէօյիւքտէրէ երթալով ցաւակցութիւն յայտնած ըլլալուն համար: Նոյնպէս շնորհակալութիւն յայտնած է Կայսրուհիին հոգեհանգիստին համար Բերայի Սանտա-Մարիա եկեղեցիին մէջ կարդացուած աղօթքներուն իր կողմէ ներկայացուցիչներ ղրկած ըլլալուն առթիւ: Դեսպանը կաւելցնէ իր հեռագրին մէջ, թէ յարմար առթիւ Պատրիարքարան գալով անձամբ պիտի յայտնէ իր շնորհակալութիւնները»:

—

«Туркестанскія Вѣдомости» լրագրի մէջ տպված է հետևեալը. «Նորին Բարձր Գերազանցութիւն երկրի գլխաւոր կառավարիչն ուղարկեց Սիր-Դարիայի, Ֆերգանեան և Սամարկանդի շրջանների զինուորական նահանգապետներին հետևեալ շրջաբերական հրամանը, օգոստոսի 31-ից. «Սաղանը դարձեալ բորբոքվեց, բայց ոչինչ չասաց:

—Բա, որդի, դու ուզում ես այդպիսի մի դուրս ընկածին բերել քո հօր օճախը՞: Ե՛կ, ինձ լսիր, աւելացրեց ցած ձայնով Սարգիս-բէկը, վերջացրու: Եթէ տեղը չը գիտես, ասեմ. «Եղցուն-թալան» ամենայարմար տեղն է, ամիսներով էլ չեն իմանայ, թէ որտեղ է. կը կարծեն թէ թուրքերն են փախցրել:

Սալանը երբ լսեց այդ, քիչ թեթևացաւ: Ուրեմն ուրիշներն էլ են ինձ պէս մտածում, կարծես մի ծանր բեռ ընկաւ նրա ուսերից: Շատ չանցած, հիւրերը վերկացան ու բարի գիշեր ասելով հեռացան: Սալանը մենակ մնաց, բայց չը քնեց. շարունակ մտածմունքի մէջ էր: Նա ծրագիր էր կազմում...

—

Ծանր գիշեր հասաւ Սալանի համար. խիղճն ու գիւղացոց կարծիքը անդադար վիճում ու նրան հանգիստ չէին թողնում: «Սպանել... մտածում էր նա. սպանել նրան, որը գուցէ ոչ մի բանով մեղաւոր չէ, որի ուրախութիւնը միայն ես եմ, որը անպաշտպան ու անօգնական է և որն ուխտել է մինչև մահ ինձ սիրել: Բայց հօրեղբայրս մթթէ սուտ է ասում: Բէհրամն ասում էր, որ հաստատ գիտէ Սօնայի ու Սարգսի յարաբերութեան մասին. մթթէ կարելի է սիրել նրան, ով ինձ խաբում ու անպատվում է: Ո՛չ, ես ցոյց կը տամ, թէ ինչ է նշանակում ինձ ծաղրի առարկայ դարձնել: Ի՛նչ ուզում է, թող լինի. վաղը մէկի կեանքը պէտք է այս աշխարհքից վերցնվի. բայց ո՛չ թէ իմը, այլ... այն սըտախօս աղջկանը: Նրա սպանելը մեղք չէ, որովհետև աւելի լաւ է սպանել, քան թէ չամուսնանալ, այն էլ անպատված թողնել. նրա մեղքը թող հողի տակ ծածկվի, որ միւսներին խրատ լինի...»:

Այսպիսի մտածմունքներից Սալանի քունը տարաւ: Սարսափելի տեսարաններ ներկայացան նրա աչքին: Նա իրան զգաց «Եղցուն-թալումը». չորս կողմը խոր ու մթին անտառ է. ինքը կանգնած է մենակ. շուրջը գազաններ են վխտում. մի ահագին արջ մօտենում է նրան. նա հրացանն ուղղում է. արձակելն ու գաղանի գլորվիլը մէկ է լինում. հրացանի ձայնից հաւաքվում են միւս գազանները և սոսկալի մռնչուններ արձակելով յարձակվում են իր վրա. հրացանը մի, երկու, երեք անգամ արձակում է, ձեռքը այլ ևս իրան չի հնազանդվում. խանչալն է ուզում հանել, չի լինում, ոտն ու ձեռը դողում են. նա թեկն է տալիս մի հաստաբուն ծառի. այդ միջոցին գազաններից մէկը այնքան մօտենում է, որ բռնում է չուխայի փեշից: Սալանը՝ տեսնելով գազանի բաց բերանը, սուր առամներն ու հրափայլ աչքերը, դողում է, մազերը բիզ-բիզ են կանգնում գլխին. ժամվան քրտինք է պատում նրան. նա ճիգ է գործում ազատվելու, բայց յանկարծ արթնացաւ: Քիչ հանդստանալուց յետոյ դարձեալ աչքերը խփեց: Այս անգամ իրան տեսաւ մի ահագին խոր անդունդի գլխին կանգնած. նա ուզում է բարձրանալ սարն ի վեր, և յանկարծ ոտքը սայթաքում է. անդունդն այնքան խոր է, որ գնում է, գնում, բայց յատակին չէ հասնում. երկիւղից ուշաթափվում է... Բայց դարձեալ արթնացաւ՝ տեսնելով իրան անկողնու մէջ, քրտինքով պատած...

—Ի՞նչ վատ գիշեր է, երբ պէտք է լուսանայ, մտածում էր նա:

Լուսանալու մօտ էր, երբ Սալանը քիչ քուն եղաւ: Այժմ նրա աչքին պատկերացաւ մի ընդարձակ ու լայնատարած դաշտ. հեռուից սպիտակին է տալիս մի ինչ որ բան. նա մօտենում է և ինչ է տեսնում. Սօնան սպիտակ շապկով գրկին մի մանուկ. նա տխուր աչքերով Սալանին է նայում. իսկ նրա յետևը՝ մթութեան մէջ Սարգսի շողն է աչքովն ընկնում: Սալանը խանչալը հանում է, յարձակվում Սարգսի վրա, բայց մի ակնթարթում նա անյայտանում է... Սալանը զարթեց: Արևի առաջին ճառագայթները ընկել էին սարերի գագաթներին. օրը բացվել էր:

Զարգուշակ օր...

—

Սալանը խանչալը կապեց ու մոքամոլոր դուրս եկաւ տանից: Մի անտեսանելի ոյժ նրան առաջ էր մղում. նա գնում էր առանց շուրջը նայելու ու առանց կանգնելու: Վերջապէս հասաւ Ք... գիւղի հարաւային կողմը գտնված անտառի կողքը, որտեղից քիչ հեռու «Եղցուն-թալան» էր: Ցանկարծ նա կանգ առաւ ու սկսեց մտածել. բայց այդ ժամանակ նրա ուշքը գրաւեց մի կանացի հագուստ, որ նկատել էր ծառերի ետևից: Սալանը ակամայ դիմեց դէպի այդ կողմը: Նա ճանաչեց Սօնին և մի սառուցանցաւ մարմնով: «Որսն իր ոտովն է եկել», մտածեց Սալանը, «ինչպէս երևում է, Աստուած էլ է ցանկանում նրա մահը:»

—Սօնա, այստեղ ինչ ես անում:

Սօնան, որ մինչև այդ չէր նկատել նրան, վեր թռաւ ու հազիւ շշնջաց.

—Ոչինչ, կովը հիւանդ է, տաւարածին չենք տվել, բերել եմ քիչ արածացնելու:

—Անտառում լաւ զկեռի տեղ գիտեմ, գնանք տեսնենք, հասած կը լինի, քաղենք:

—Իսկ ես ուզում էի կովը թողնել այստեղ, գնալ տուն, որովհետև հօրս համար հաց պէտք է տանեմ արտը:

—Շատ չենք ուշանայ, անտառովն էլ գիւղը մօտ է:

Սօնան անտառի անունը լսելիս դողաց, բայց իր երկիւղը ծածկելու համար, ակամայ հեռուեց Սալանին: Նրանք մտան անտառ: Թէև ծառերը տերևներից զուրկ էին, բայց նրանց խտութեան և մոշի թփերի խիտ հիւսուածքը դժուարանցնում էին անցնելը: Սալանը երբեմն հանում էր խանչալը և արգելք եղող ճիւղերը կտրատում: Ձայն, ծպտուն չը կար: Սօնան նըկատեց, որ դէպի անտառի խորն են գնում և ասաց.

—Ճանապարհը վերև է, ինչու ես այստեղով գնում, այստեղով «Եղցուն-թալան» ենք գնում:

—Ահա այստեղ է. դու այդտեղ նստիր, ես կը քաղեմ:

Յետոյ նրա երեսին նայելով աւելացրեց.

—Ինչու ես այդպէս տխուր:

—Զը գիտեմ, տխրութիւնն ինձանից չէ հեռանում. երբ ուզում եմ ծիծաղել, աչքերիցս արտասուք է հոսում. իսկ այսօր հէնց առաւօտվանից սիրտս մի տեսակ ծանր է. կարծես մի վատ բան պէտք է պատահի:

—Քանի որ ես քեզ հետ եմ, ոչինչ չի պատահի. ամեն բան կանցնի:

Սօնան նստեց, իսկ Սալանը քսան քայլ հեռու կանգնեց ծառի մօտ:

—Ժամանակ է, մտածեց Սալանը. բայց, Տէր Աստուած, ինչպէս է սիրտս բաբախում. ոտներս թուլանում են. ես ինչպէս սուր իջեցնեմ նրա վրա. բայց չէ, պէտք է շտապել... Նա խանչալը հանեց, ծածկեց ձախ թևքում և արագ-արագ եկաւ դէպի Սօնան:

—Ի՞նչ է պատահել, Սալան, բացականչեց Սօնան, ու ճիգ արաւ տեղից վեր կենալու: Բայց չը կարողացաւ. մի ակնթարթում խանչալը շողաց ու խրվեց նրա կուրծքը:

Սալանի ականջին այդ ժամանակ հնչեց «մարդասպան» բառը. նա նոր զգաց իր գաղանաբարոյ վարմունքը, բայց ուշ էր. նա կռացաւ, դողդողալով խանչալը հանեց սիրած աղջկայ կրծքից ու վերջին համբոյրը տվեց նրա սառած շրթունքներին:

Երիտասարդը վերադարձաւ գիւղ. բայց նա արդէն խելագարված էր...

Ծերունի Կարապետը երկար չապրեց. նա չը կարողացաւ տանել միակ զաւակի կորուստը:

«Աստուած իրանց մեղքի համար պատժեց», մրմնջում էին պառաւ կանայք եկեղեցի գնալիս...

Սալանի կալուածները նրա ազգականները բաժանեցին իրանց մէջ. Սարգիս-բէկն ուրախութեամբ վերցրեց իր կալուածներին սահմանակից արօտատեղին... Սուրէն

մարկանդի և Ֆերդինանդի շրջաններում նորերում իմ կատարած շրջակայութեան ժամանակ մի քանի տեղերում չափահաս ազգաբնակութեան հետ միասին դուրս էին գալիս ինձ ողջունելու նաև անչափահաս երեխաներ։ Այս բանը զարմանում եմ ոչ միայն գովելի, այլ և շատ ցանկալի, որ մշտական կանոն դառնայ։ Եթէ հին սերունդից, որ մեծացել է նախկին ժամանակների մշակած սովորութիւններով, դժուար է պահանջել, որ շուտ ծանօթանայ այն պահանջների և կարգերի հետ, որ ռուսաց իշխանութիւնը սահմանում է ընդհանուր խաղաղութեան և աշխատանքի կեանք զարգացնելու համար, ուրեմն երիտասարդ սերունդի կրթութիւնը պիտի մեր առանձին խնամքի առարկայ դառնայ և այդ ուղղութեամբ ոչ մի միջոց չը պէտք է անուշադիր թողնել։ Մեծացող սերունդը պիտի ամենաջահել ժամանակից սովորէ լաւ ճանաչել իր գլխաւորներին և ղեկավարներին, նրանց հայեացքներն ու պահանջները. իսկ իշխանութիւնների քաղցր վարմունքը և բարի յարաբերութիւնները, ինչպէս յայտնի է, զրոյցվում են աւելի պինդ, քան խիստ հրամանները։ Խնդրում եմ ձեր գերբաղանցութեանը և պ.պ. գաւառապետներին ուշադրութիւնից չը դցել այս բանը նոյնպէս և իրանց շրջակայութիւնների ժամանակ»։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Բագուի ձիաքաշ երկաթուղու մի գիծը գալիս հասնում է երկաթուղու կայարանին և կանգնում։ Կայարանից դէնը՝ դէպի Բալախանի՝ մի ահագին տարածութեան վրա բնակվում է Բագուի բնակիչների մի մասը, որոնց թւում պէտք է հաշվել և մալականների գիւղը։ Կայարանից սկսվում է Բալախանեան մեծ փողոցը, որի երկու կողմումն էլ ապրում են բաւական թւով ընտանիքներ և վերև յիշված գիւղի բնակիչները։ Այդ փողոցի վրա ապրողների մի մասը կազմում են երկաթուղու գծի ծառայողները՝ իրանց ընտանիքներով։ Կայարանից մինչև մալականների գիւղը՝ մի վերստից աւելի է։ Եւ ահա խեղճ ժողովուրդը ամեն օր պէտք է ոտով այդքան տարածութիւն կարէ, մինչև որ հասնէ ձիաքաշ երկաթուղուն և ապա նրա միջոցով քաղաք հասնէ։ Կառք նստել չեն կարող. նախ որ կառքեր էլ չը կան այդ մասում, իսկ եղած ժամանակն էլ 50 կոպէկ պէտք է վճարել։ Բայց արդեօք բոլորն էլ կարող են այդքան վճարել։ Պարզ է որ ոչ, մանաւանդ որ ինչպէս ասացինք, շատերը ծառայողներ են։ Հետևապէս ինչ պէտք է անել—ոտքով անցնել այդքան տարածութիւնը։ Բայց դա անտանելի դժուար է։ Անտանելի մանաւանդ փոքրահասակների և աշակերտների համար։ Այդ բոլոր դժուարութիւններին կարող էր վերջ տալ ձիաքաշ երկաթուղու ընկերութիւնը՝ երկաթուղու կայարանից մինչև մալականների գիւղը մի գիծ աւելացնելով, որով մեր կարծիքով՝ թէ ընկերութիւնը շահված կը լինէր և թէ այդպիսով ապահովված կը լինէր մի ստուար բազմութիւն անտանելի ճանապարհից»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՈՒԻԶԷ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՑ

—

Կ. Պոլսի հայոց լրագրներում կարդում ենք։

«Մուշէն կը գրեն օգոստ. 25 թուականով. Անցեալ տարի հունձը անբաւական ըլլալուն, հացաբոյսերու գինը բաւական սուղ էր մինչև ներկայ հունձքի եղանակը, և թէ քաղաքացիք և թէ գիւղացիք նիւթապէս նեղուեցան։ Այս տարի հունձերը առատ են, մանաւանդ Պուլանըգի կողմերը։ Բայց Մշոյ դաշտի գիւղօրէից շատերու մէջ անձրևի առատութենէն և հողի պարարտութենէն ցորենը կարեր է, որով ցորենի ընդարձակ արտերու մէջ երկար ցողուններու վրա դատարկ հասկեր միայն կը գտնուին. այդ ալ դժբաղդութիւն մըն է, որ շատերուն գարունէ ի վեր ունեցած ակնկալութիւնը յօդս ցնդեցուց։ Բայց օրհնեալ ըլլան Պուլանըգի ամբարները. հոն երբ հունձքը լաւ ըլլայ, կը բաւէ Մշոյ ալ, Բաղէշին ալ, և հինէն ի վեր հոն առատ եղած է ու կըլլայ։ Երբեմն դիտողութիւններ եղան միսիոնարներէ ոմանց կողմէն, թէ մենք իրարու օգնող և իրարու վրա գուրգուրացող չենք. բայց կը զարմանամ, երբ կը դիտեմ որ հարիւր տնուոր գիւղի մը մէջ, ուր միայն հազիւ 10—20 լուծք կայ, ամենքն ալ եղածներէն կօգտուին փոխադարձաբար, և այսպէս իրարու օգնութեամբ իրանց ապրուստը՝ գէշ աղէկ կը հոգան։

«Դպրոցական վիճակացոյցեր չունիմ ձեռքս, որ անոնց վրա երկար բարակ գրեմ. բայց վիճակացոյցի պէտք չի կայ։ Անցեալ տարի Առաջնորդարանի միջոցաւ ծանուցուեցաւ հանրութեան թէ 20—30 դպրոցներ բացուած են։ Ես, որչափ որ փնտռեցի, Մշոյ թաղային դպրոցներէն զատ և 1—2 գիւղական ծաղիկներէ զատ դպրոց չը կրցայ գտնել։

«Ս. Առաքելոց վանքին որբանոցը կը յարատևէ և Պատրիարքարանէ որոշուած թոշակով կը հոգացուի. որբերուն առողջութիւնը լաւ է, վասն զի վանքին օդն ու ջուրը ինքնին առողջութիւն են. բայց որբերու թիւը այժմ 40 է աւելի է, և անոնց ծախքը Պատրիարքարանէ տրուած դրամով միայն չի գոցուիր ու պատճառ կ'ըլլայ որբերուն լաւ չխնամուելուն։ Ասոր առաջը առնել կարենալու համար բարեսէր ազգայիններու օժանդակութեան պէտք կայ՝ թէ որբերու որդեգրութեամբ, թէ դրամական նուէրներով։

«Ծանուցինք արդէն թէ Վանայ Կլոր-Դարի կրօնափոխութեանց մասին Վանայ առաջն. տեղապահին և գաւառ. ժողովներու կողմէ հասած գրութիւնները խորհրդակցութեան առարկայ եղած են Կրօնական Ժողովի վերջին նստին մէջ։ Այդ գրութիւնները կը յայտնեն թէ կրօնափոխութիւնը լոկ տնտեսական պատճառներէ առաջ եկած է։ Կլոր-Դարի ժողովուրդը տնտեսական տագնապներէ ամենէն աւելի վնասուած ժողովուրդն է, և Տոմինիկեանները այս պարագայէն օգուտ քաղելով, իրանց մեծաւորին՝ որ միանգամայն Վանայ Ֆրանսական փող-հիւպատոս է, հրամանովը Նպաստներ կը բաշխեն և երթևեկի ու այլ դիւրութիւններ ընծայել կը խոստանան անոնց՝ կրօնքի փոխարէն։ Այս առթիւ կը հաղորդեն թէ Վանայ առաջնորդի տեղապահ Ստեփան վարդապետ Կլոր-Դարի ժողովուրդին հոգևոր պէտքերը գոհացնելու համար ամեն միջոց պատրաստած է, բայց որովհետև խնդիրը զուտ տնտեսական է, տեղապահը դիմած է Պատրիարքարան և թէև քանիցս նպաստներ ընդունած է, սակայն ժողովրդին մշտական պէտքերուն բաղդատմամբ ղրկուած նպաստները անբաւական եղած են։ Կրօնական Ժողովը իր վերջին նստին մէջ նկատելով որ այս կրօնափոխութիւնը հոգևոր պաշտօնեաներու երեսէն և կամ միջոցներու անբաւականութենէն աւելի նիւթական պէտքերէ առաջ եկած է, տեղեկացաւ Պատրիարքին կողմէ գործադրուած միջոցներուն և որոշեց այն դիմումները, որոնք կարևոր են կասեցնելու այս օրինակ հոսանք մը։ Ժողովը խոհեմութիւն կը հաւարի առ այժմ չհրապարակել իր ձեռնարկելիք միջոցները»։

ԴԱՆԻԱՅԻ ԼՈՒԻԶԱ ԹԱԳՈՒՀԻՆ

—

„Journal de S.-Pétersbourg" լրագիրը, ռուսաց արտաքին գործերի մինիստրութեան օրգանը նորերս վախճանված Դանիայի Լուիզա թագուհու մասին գրում է.

«Լուիզա թագուհու բարձր յատկութիւնները ընդհանուր յարգանքի առարկայ էին։ Գահի վրա նա ներկայացնում էր ամենանուիր առաքինութիւնների օրինակ։ Նրա գեղեցիկ բնաւորութիւնը, նրա զգացումների վեհութիւնը և նրա կեանքի պարզութիւնը ընդհանուր յանգանք էին գրաւել դէպի նա։ Դանիական արքայական ընտանիքը, որ ազգականութիւն ունի Եւրոպայի շատ թագաւորող տների հետ, այնքան սերտ կերպով կապված է այդ տների հետ, որ այդ կորուստը զգալի կը լինի Դանիայի սահմաններից շատ հեռու։ Ցունաստանում, Անգլիայում և ուրիշ երկրներում ազգերը կը միանան դանիական արքունիքին հասած խորին վշտին։ Ռուսաստանում, ուր ամբողջ ազգը բաժանում է իր թագաւորների թէ տխրութիւնը և թէ ուրախութիւնը, Լուիզա թագուհու, թագաւոր Կայսրի օգոստափառ տատի մահը սաստիկ ցաւակցութիւն առաջ կը բերի։»

Այդ առիթով, հարկաւոր ենք համարում մի քանի կենսագրական տեղեկութիւններ հաղորդել հանգուցեալ թագուհու մասին։ Լուիզա թագուհին Հէսսէն-Կասէլի դուքս Վիլհելմի երրորդ աղջիկն է, ծնված 1817 թ. սեպտեմբերի 7-ին։ Իր սեպհական ընտրութեամբ՝ նա ամուսնացաւ 1842 թուին, մայիսի 26-ին, իր երեխայութեան ընկեր Շլեզվիգ-Հոլշտէյնի իշխան Քրիստինէի հետ. չնորհիւ այդ ամուսնութեան իշխան Քրիստինէն Լոնդոնի 1852 թուի դաշնագրի հիման վրա՝ հռչակվեց անդաւակ վախճանված Դանիայի թագաւոր Ֆրիդրիկ VII-ի ժառանգ և երբ վերջինս մեռաւ 1862 թ. սեպտեմբերի 15-ին, բազմեց դանիական գահի վրա Քրիստին IX անունով։ Այդ ամուսնութիւնից ծնված զաւակները բացառիկ երջանկութիւն ունեցան. մինը դարձաւ Յունաստանի թագաւոր, երկրորդը՝ Անգլիայի թագաւորի ամուսին, ուրեմն Անգլիայի ապագայ թագուհի, երրորդը՝ Ռուսաստանի կայսրուհի—մայր թագուհի Մարիա Ֆէոդորովնան։ Դանիական արքայական զոյգի ամուսնական կեանքը յայտնի է իր բացառիկ ընտանեկան երջանկութեամբ, այնպէս որ 1867-ին, արծաթեայ հարսանիքի տօնախմբութեան առիթով տրատարակված մանիֆեստի մէջ ասված է. «Դանիայի ամեն մի ընտանեկան օջախին ցանկանում ենք նոյնպիսի ընտանեկան երջանկութիւն, որպիսին Նախախնամութիւնը պարգևել է թագաւորին և թագուհուն»։ Ինչպէս վկայում են՝ Լուիզա թագուհին մեծ ձգտում և սէր ունէր դէպի հասարակական, գրական և գեղարուեստական խնդիրները։ Իր ժամանակի մեծ մասը նա գործ էր դնում աղքատներին խնամելու և կարօտեալներին օգնութիւն հասցնելու։ Նա մեռաւ 81 տարեկան հասակում։

ՏԽՈՒՐ ՊԱՏԿԵՐ

—

Շատ ճիշդ է նկատում մի լրագիր, երբ ասում է թէ Ֆրանսիայի անկեղծ և ջերմեռանդ բարեկամների սիրտը պէտք է խոր ցաւ զգայ, կարդալով այն բոլորը, ինչ որ այժմ գրում են գերմանական և անգլիական լրագրները Բիշիլիոյի, Նապոլէոնի, Դեկարտի, Պասկալի, Վոլտէրի, Վիկտոր Հիւգոյի հայրենիքի մասին։ Այն բոլոր խայտառակ մերկացումները, որոնք միմեանց ետևից ամեն օր, ամեն ժամ, ամեն րոպէ երևան են գալիս, պարզ ցոյց են տալիս, որ Ֆրանսիայի հետ ինչ որ մի բան է կատարվում, որ նա առողջ վիճակի մէջ չէ և ճգնաժամը հեռու չէ...։

Մի կողմից անգլիական լուրջ լրագրներից մէկը՝ «Daily News» հաստատում է, որ ֆրանսիական հանրապետութեան նախկին նախագահ Կազիմիր Պէրիէն հրաժարվել է իր պաշտօնից այն պատճառով, որ արտաքին գործերի նախկին մինիստր Հանօտօ թոյլ է տուել իրան՝ ընդօրինակել գերմանական Մինիստէր դեսպանի՝ իր կայսրին ուղղած զեկուցագիրը. միւս կողմից գերմանական մի լուրջ լրագիր՝ «National Zeitung» բոլորովին հերքում է այդ լուրը։ Այժմեան նախագահ Ֆէլիքս Ֆորի մասին մի քանի լրագրներ ասում են, որ նա պաշտպան է վերաքննութեան գործին, իսկ մի քանիսը պնդում են, որ նա հակառակ է։ Գեներալ Նեգրիէ դուքսը և երկինք է բարձրացնում ֆրանսիական զօրքը, ասելով թէ այդ զօրքը ոչ մի ժամանակ այնքան նուիրված չէ եղել հանրապետութեան, ինչպէս այժմ, բայց ֆրանսիական շատ լրագրներ յիշում են Ալֆոնս Դոդէի գուշակութիւնը, թէ հեռու չէ այն ժամանակը, երբ զօրքը վերջ կը տայ հանրապետութեան, որովհետև նրա օֆիցէրները հպատակվում են եզուիտների ազդեցութեան։

Պատկերը տխուր է։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, սեպտեմբերի 7-ին

Դարձեալ Կրետէի մէջ վերսկսան խառնակութիւնները. կղզոյն ազգային ժողովոյ կողմանէ ծովակալներուն մատուցած յայտագիրն երբէք չազդեց եւրոպական պետութեանց վրայ. և սակայն Կրետէի մէջ այսօր հուր և արիւն կը պոռդկան։ Սուլթանը յաջողեցաւ, ուր ուրեմն, օգտվել եւրոպական պետութեանց սովորական ձգձգումներէն, և Զէվադի ձեռներէցութեամբ գրդռել թուրք բաշի-բոզուկներն ու զօրքերը՝ յարձակելու քրիստոնեաներուն վրայ և լաւ ջարդ մը տալու անոնց՝ Կանդիայի մէջ, առանց խորութեան, և սուլթանն՝ իր սովորական ճարպիկութեամբ, միշտ դարձեալ, իւղի պէս, ջուրին երեսը պիտի ելնէ՝ յանցանքն եւրոպական պետութեանց վերագրելով, որ դիմադրեցին օսմանեան զօրքերուն Կրետէ ելնելուն։ Ո՞չ ապաքէն կղզոյն մէջ խաղաղութեան և անդորրութեան պահպանման համար էր, որ՝ Զաթը Շահանէն՝ իբրև խաղաղութեան պաշտպան, միշտ կը փափաքէր Կրետէի զինուորական ոյժը զօրացնելու... ծովակալներն ալ օգը հանելու համար, և հիմա ինչ իրաւունք կայ սուլթանին մեղք դնելու։

Արդէն հեռագիրներէն իմացած էք՝ թէ ինչ պարագաներու մէջ տեղի ունեցեր են յարձակումներն, որ սկսած են թուրք խուժանին և զինուորներուն կողմանէ՝ չի թոյլատրելու համար անգլիացիներուն՝ իրենց իշխանութեան ներքև առնելու տեղւոյն մաքսատունը, որ՝ որոշմամբ ծովակալներուն, յանձնուած էր անոնց, և այս պատճառաւ առաջին հարուածն անգլիացի մը ստացաւ։ Առնուած տեղեկութեանց նայելով չորս հարիւրէ աւելի քրիստոնեայ ջարդուած է։ Անգլիացիին սպանման վրայ՝ անգլիական զրահաւոր մը մէկ քանի ռումբ արձակած է Կանդիայի վրա՝ և ասկից յառաջ է եկած հրդեհն, որ մոխիր դարձուցեր է բազմաթիւ տուներ և Անգլիոյ, Գերմանիոյ և Ամերիկայի հիւպատոսարաններն։ Անգլիոյ փոխ-հիւպատոսն՝ իր ընտանիքով մէկ տեղ այրուած է, և այս ամենուն հանդէպ Զէվադ-փաշա, հանդիսատես լինելէ զատ ուրիշ ոչինչ է ըրած։ Աւստրօ-Ունգարիոյ հիւպատոս՝ պ. Պինդէր, «Léopard» յածաւարակն անմիջապէս յղած է Կանդիայի նաւահանգիստը՝ պաշտպանելու համար գերմանական և աւստրօ-ունգարական հպատակներն՝ և ի հարկին, պատնէշ, իր մէջն առնելու։ Քսան անգլիական զօրք ապաստան և դիսունի չափ վիրաւորուած են. թուրք ապաստաններուն թիւը տակաւին որոշ չի գիտցուիր. կըսուի թէ բազմաթիւ է։ Եւրոպական պետութեանց կողմանէ հասնող զօրքերն այժմ տիրած են քաղաքին բոլոր ամրութեանց։ Աթէնքէն քաշուած հեռագիր մը կըսէ, թէ թրքական զօրքերը թէպէտ քրիստոնեաներուն կեանքն ու ինչքը պաշտպանելու համար կը մնային հոն, այլ սակայն ոչինչ ըրած են, ոչ խուժանին արշաւանքն արգելած են և ոչ ալ հրդեհին և աւարառութեանց առաջը կրցեր են առնուլ։

Այժմ կը մնայ մեզ տեսնել, թէ եւրոպական պետութիւնները՝ որոնց դէմ լաւ խաղեր խաղաց սուլթանը, ինչ ընթացք պիտի բռնեն թուրք կառավարութեան դէմ, և, պիտի նկրտին տակաւին պահպանելու Կօրանի մոլեռանդ բռնակալութեան մը ամբողջութիւնն, որ երթալով իրենց ամբողջութիւնը քայքայելու բնութիւնը կը ստանայ։

—

Զինաթափութեան մասին կոմս Մուրավիեվի շրջաբերականը՝ ոչ այնքան համակրանաց արժանացաւ պալատին և Բ. Դրան առջև։ Թուրք կառավարութիւնը կը կարծէ՝ թէ ընդհանուր զէնընկեցութեան գաղափարը, զոր Ռուսիոյ պետութիւնը յղացաւ, եթէ իրականութիւն գտնէ, Պալքանեան թերակղզւոյ քրիստոնեայ ժողովրդոց մէջ նիզակակցութիւն մը կը գոյանայ ընդդէմ Թուրքիոյ։ Դիւրին է մակաբերել, թէ ինչ կուղէ հասկացնել թրքաց պետութիւնը։

Գիրուկ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՑԻՑ

—

Բոստոն, սեպտեմբերի 12-ին

Երէկ Ամերիկային հրաժեշտ տուին սպանիացի պատերազմի գերիները. ծովակալ Սէրվէրան և իր նաւաստիները ճամբայ եղան իրենց հայրենիքը դառնալու։ Ցաւոտի չէ թէ ինչ էին այդ մարդոց մեծագոյն մասին իսկական զգացումները, երբ ամիսներով ամեն խնամ և հանգստութիւն վայելելէ վերջ՝ կրկին կը դառնան իրենց նախկին դժնդակ կեանքը, սակայն ծերունի ծովակալը անկասկած է, որ սրտի դառնութեամբ իր երեսը դարձուց դէպի իր հայրենիքը։ Սպանիացի ծովակալը դժգոհ չէ Ամերիկայէն, ընդհակառակն, անպաշտօն եղանակաւ, իր երախտագիտութիւնը քանի անգամ յայտնելէ վերջ, մեկնելէն առաջ, մասնաւոր նամակով մը, իր շնորհակալութիւնը յայտնեց նախագահին իր վայելած ընդունելութեանը համար. սակայն կորիճ ծերունին կերևի Սամփսոնի թնդանօթներէն աւելի շատ խոյս տալ պիտի ուզէր իր հայրենակիցներու ապերախտութենէն։ Ցաւոտի է թէ ծովակալը գինուորական ատեանի առջև պիտի դատվի, և ինչպէս «Նիւ-Եորք Ճրքնը» դիտել կուտայ՝ Սպանիան թերևս մահուան դատապարտէ իր ամենէ քաջ զօրապետը, եթէ հոն կարելի լինի մէկը գտնել, որ կրնայ չիտակ նշան առնել...

Այստեղի լրագրները շատ կը հեսաքրքրին Պլանքօ-Սէրվէրա հարցով. շատերուն կարծիքով, Սանթ-Եագոյի քով սպանիական պարտութեան պատասխանատուն զօրապետ Պլանքօն է, որ յաջողեցաւ, իր ազդեցութեան չնորհիւ, իրաւունք ստանալ վերին հրամանատարութիւն ընել թէ բանակին և թէ նաւատորմիղին։ Ծովակալն առաջուց հրաման ուղեց վանդաւոր դիրքէն հեռանալու, Պլանքօն հրաման չը տուաւ, մինչև որ ամերիկացիք արդէն սպանիական նաւերու ելքը անկարելի ըրեր էին։

Հոս ալ Մայլզ-Ալճէր կռիւը բորբոքած է. զօրավար Մայլզ ժամոյ միջոցաւ հրապարակաւ քննադատեց և դատապարտեց քարտուղար Ալճէրի ընթացքը պատերազմի միջոցին. Ալճէր չը կրցաւ պատասխանել։ Հասարակութեան յուզումը ստիպեց, որ նախագահը քննիչ ատեան մը կազմէ չէզօք և վստահելի անձերէ՝ տեղի ունեցած զեղծումները քննելու և յանցաւորը գտնելու։ Օրէ օր յայտնի կը դառնայ, թէ զեղծումները սոսկալի եղած են և հարիւրներով դահեր տարած, հիւանդ զինուորներ ծարաւ կը մեռնին եղեր, բժշկական խնամք, դեղ և նոյն իսկ հիւանդի անհրաժեշտ պարզ կերակուրներ ամբողջովին բացակայ են եղեր մինչև անգամ մեծ քաղաքներու խիստ ժողովված բանակներու մէջ։ Եթէ Ալճէր իրաւամբ որ պատասխանատու է այս բաներուն համար, Մաք-Քինլի փութով պիտի ստիպվի պատերազմին նոր քարտուղար մը գտնել, յուսանք թէ լաւագոյն մը...։

Պատերազմական գրականութեան մը չրջանին մէջ թեակոխած ենք. վիճաբանական մատնագիրներ սուրը ձգած՝ գրիչով անգամ մ'ալ կը կռուին. հին պատերազմները՝ ամսաթերթերը երկար յօդուածներով կը բացատրեն՝ նաւերու, թնդանօթներու տեսակները, գործածութիւնը, պատերազմի դասերը, գիտութեան հանած եզրակացութիւնները և այլն. ասոնց ոմանք շատ հետաքրքրական են։ Թատրոններն ալ սկսած են պատերազմէն առնուած դրամներ ներկայացնել, բանաստեղծութեանց և երգերու ծայրը դեռ չը հասանք։ Պատերազմէն դարձող զինուորներու պատմած տառապանքի վէպերը և որոնցմէ աւելի սրտաչարժ և պերճախօս դեղնած անարիւն դէմքերը և դողդոջուն մարմինները, սակայն, պատերազմի դիւթական գոյնը բաւական փոխեցին։ Երկաթուղու կայարանը զինուորներու վերադարձին սպասող ամբոխը քանի քանի տեղ լսեց իրենց սիրելիներու վերադարձին զուր տեղ սպասող կնոջ մը, նշանածի մը սրտաճմլիկ ճիչը։ Պատերազմի սարսափներուն մօտէն ծանօթանալէ վերջ երբ յանխաղաղութեան հրաւէրը անակնկալի մը պէս կարծ երևան եկաւ, ամերիկեան մամուլը ուրախութեան և հաւանութեան արձագանք տուաւ։

Պիտի գայ օր մը այդ ցանկալի խաղաղութիւնը ամբողջ աշխարհին... Արմէն

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բերլինից հեռագրում են. «Ոչ մի կասկած չը կայ, որ Անգլիան և Գերմանիան կնքել են գաղթականական դաշնագիր, որի մանրամասնութիւնները յայտնի կը լինեն միայն այն ժամանակ, երբ կարելի կը լինի հրատարակել և երկիւղ չի լինի գրգռել Պօրտուգալիայի դժգոհութիւնը, որովհետև այդ դաշնագրով Պօրտուգալիայից խլվում է նրա հարաւ-աֆրիկեան երկրների մի մասը։

ԽԱՒՈՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսի «Փունջ» լրագրին՝ Ամերիկայի Ուսթը քաղաքից օգոստոսի 16-ից գրում են.

„Մաշտոց վարդապետը փախաւ գնաց Զէյթակ. տեղւոյս եկեղեցւոյ անօթներն ու ապասները առեր տարեր է. կը կարծուի թէ ոսոխականութեան մէջտեղ պիտի պահանջեն։ Այժմ մշեցի պանդուխտ քահանայ մը կայ առաջամայ կերպով"։

Այժմ ամենայն ինչ կատարեալ է...

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՎԱՐՇԱՎԱ, 24 սեպտեմբերի։ Բացվեց ալիւրաղացների ժողովը, ներկայութեամբ 180 հոգու։

ՊԵԿԻՆ, 24 սեպտեմբերի։ Քաղաքը հանգիստ է։ Ցզունգ-Լի-Եամէն խնդրեց կատարեալ նեբումն՝ վերջին անկարգութիւնների առիթով։ Կարգը պահպանելու համար՝ Պեկին եկան մի քարի զօրագնդեր։ Նոր անկարգութիւններ տեղի չունեցան։ Այն տեղում, ուր վիրաւորվածի ենթարկվեցին եւրօպացիները, յարձակում գործողներից 8 հոգի ի ցոյց են դրված։

ՊԱՐԻԶ, 24 սեպտեմբերի։ «Matin» լրագիրը յայտարարում է, որ եթէ Անգլիան՝ Ֆաշոդի վերաբերեալ բանակցութիւնների ժամանակ սկզբից հարց կը դնէ Մարշանին յետ կանչելու մասին, ֆրանսիական կառավարութիւնը բացասական պատասխան կը տայ։

ՊԱՐԻԶ, 24 սեպտեմբերի։ Նաւահանգստային մեքենալարների մեծ մասը գործադրել արեց. նոյնպէս վարձվեցին շատ քարտաշներ և նախշքարներ, որպէս զի գործադրուլ արած հանքագործների հետ միասին գործեն։ Երբ գործադրուլ անողները մի քանի թաղանումներ արեցին Գրենէլ և Պասսի թաղերում, կանչվեցին զրահնները և կերասիրները՝ աջակցելու հանրապետական պահակախմբին։

ԲԵՐԼԻՆ, 24 սեպտեմբերի։ «Kaiserin Augusta» պատերազմական նաւը ուղևորվեց Կիաոչաու՝ պաշտպանելու գերմանական շահերը։ Վերցրված են մի օֆիցէր և 30 ծովային զինուոր՝ Ցակու իջնելու համար։ Այդ զօրախումբը կերթայ Պէկին, եթէ այդ բանը կը պահանջէ Պէկինի գերմանական միսսիան։

ՑՆՏԻՆԻԷ, 24 սեպտեմբերի։ Բ. Դուռը հրամանագրեց Էդհէմ-փաշային ճանապարհ ընկնել, որպէս զի վերականգնեցնի կարգը և բաւարարութիւն տայ վնասվածներին։

ՊԱՐԻԶ, 24 սեպտեմբերի։ Դրէֆուսի գործի քննութիւնը ժամանակաւորապէս յարուցված է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

—

Մարդատար № 1 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ ցերեկվայ 4 ժամին և 5 րօպէին։ Թիֆլիս է հասնում առաւօտեան 8 ժամ 26 րօպէին։ Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ առաւօտեան 9 ժամ և 10 րօպէին։ Բաթում է հասնում երեկոյեան 8 ժամ և 47 րօպէին։

Մարդատար № 3 գնացքը դուրս է գալիս ԲԱԳՈՒԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ գիշերվայ 12 ժամ 20 րօպէին։ Թիֆլիս է հասնում երեկոյեան 6 ժամ և 33 րօպէին։ Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ՝ երեկոյեան 7 ժամ 48 րօպէին։ Բաթում է հասնում առաւօտեան 8 ժամ 28 րօպէին։

Մարդատար № 2 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ առաւօտեան 8 ժամ 20 րօպէին։ Թիֆլիս է հասնում երեկոյեան 8 ժամ 22 րօպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս՝ երեկոյեան 9 ժամ 5 րօպէին։ Բագու է հասնում՝ ցերեկվայ 12 ժամ 59 րօպէին։

Մարդատար № 4 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ երեկոյեան 8 ժամ 35 րօպէին։ Թիֆլիս է հասնում առաւօտեան 9 ժամ 7 րօպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս առաւօտեան 10 ժամ 57 րօպէին։ Բագու է հասնում առաւօտեան 5 ժամ 45 րօպէին։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—1¾—2¼ ժ. ներքին և միասեռական հ. ականջի, կոկորդի և քթի հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Ն. ՇՊԱԿՈՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (եղեկտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.

Տ. Ի. ԲՈՒԻԵՆԿՈ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է առնում մէզի, խրտի, արեան, կայմի և այլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

25—150 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Լոյս տեսաւ

Սկզբունք քրիստոնէական

ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՒԱՏՈՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

դասատետրը

Պետական սկզբնական և միջնակարգ դպրոցների ստորին դասարանների համար կազմեց

ՊԵՏՐՈՍ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Երկրորդ տարի . . . 25 կ.
Երրորդ » . . . 30 կ.

Մամուլի տակ են և միւս տարիների գրքոյկները։ Գրավաճառներին 20% զեղչ։ Դիմել՝ Шуша, въ книжную торговлю Б. Теръ-Саакянцъ.

2—3

Լոյս տեսաւ

ԳԷՈՐԳ ԲՐԱՆԴԷՍԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԵՒ ՀԵՐՈՍԸ

Թարմ. Տ. Յովհաննիսեան

ԳԻՆԸ 25 ԿՕՊԷԿ

Վաճառվում է Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում։ 1—5

Զգուշացէք կեղծումներից

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՕՆ

Գ. Ֆ. ԻԻՐԳԷՆՍ

Ոչնչացնում է պեպէնները, սեւութիւնը, դեղին բծերը, պուզիկները և պուտկները և ներգործում է աւելորդ քրտնելու դէմ։ Խորհուրդ է տրվում ձեռք բերել, որպէս տուալէտային անուշահոտ սապօն, բարձր արժանաւորութեան։

ՈՍԿԷ ՄԷԴԱԼ 1893 թվի համար։

Կտորի գինը 50 կ., ½ կտորի 30 կ.։

Ծախվում է բոլոր ամենաբաւ դեղագործական մագազիններում և դեղատներում։

Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար Գ. Ֆ. Իրգէնսի մօտ Մոսկվայում։ Դէպօ, Թիֆլիսում, Ագժուրովի մօտ, դեղագործական ապրանքների առևտրի կովկասեան ընկերութեան մէջ, Մուրինովի և Գրիվնակի, պ.պ. Պապովների և Արիստակովի մօտ։

(10, 25) 17—24

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ, ԹԻՖԼԻՍՈՒՄ

Ստացվել և վաճառվում է՝

	Ր.	Կ.
«БРАТСКАЯ ПОМОЩЬ ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ» ժողովածուի երկրորդ ճոխացրած հրատարակութիւնը, գինը 3 ր. 25 կ. ճանապարհածախսով . .	3	75

Նոյն տեղը վաճառվում են՝

ПОЛОЖЕНІЕ АРМЯНЪ ВЪ ТУРЦІИ երկրորդ հրատ.	1	—
ПОЛОЖЕНІЕ ДѢЛЪ ВЪ ТУРЕЦКОЙ АРМЕНІИ	—	35
ՍՈՒՍԱԿ երգարանի վերջին հրատարակութիւնը	1	—
ՍԱՑԵԱԹ-ՆՈՎԱ, Գէորգ Հախվերդեանի հրատարակ.	—	50

Պէտք է դիմել ուղղակի այս հասցէով՝ ТИФЛИСЪ, Центральная Книжная Торговля, իսկ արտասահմանից՝ TIFLIS, Libraire Central. (ս.) 3—10

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Զեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Երկու սեռի անձանց, 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, եբրաչիաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱԳՄՈՒՆԳԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերոսինի գործարանական հաշուեհատութեան։

Բ) Առևտրական թուաբանութիւն։

Գ) Առևտրական նամակագրութիւն։

Դ) Գեղագրութիւն և ամենաստ ձեռքերի ուղղութիւն։

Պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ։

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 5 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Սերգիեվսկայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խիդդէկելի գրավաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ ԳԻՆՆ Է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ (ե. ս.) 30—30

ՈՒՐԲԷՆ L'URBAIN

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ՝ ԿԵԱՆՔԻ, ԴՐԱՄԱԳԼԽԻ, ՕԺԻՏԻ, ՀԱՍՈՑԹՆԵՐԻ և այլն ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ, առանձնաշնորհումներով՝ հիւանդութեան և աշխատելու անընդունակութեան դէպքերում, և մանակցութիւն ունենալով զուտ արդիւնքի մէջ հէնց ապահովագրութեան առաջին տարուց սկսած։ Գրասենեակը՝ Անդրկովկասի, Անդրկասպեան երկրի, Թիւրքեստանի և Ռուսաստանի համար՝ գտնվում է Թիֆլիսում, Միքայէլեան փողոց, № 9, տուն Պապովայի։

Գլխաւոր լիազօր՝ ԲԱԳՐԱՏ ԳԵՐԱՍԻՄՕՎԻՉ ՏԷՐ-ՄԱԹԷՈՍԵԱՆ
Տեսուչ՝ ՆԻԿՕԼԱՅԻ ԳԵՐԱՍԻՄՕՎԻՉ ՏԷՐ-ՄԱԹԷՈՍԵԱՆ

Տեղեկութիւններ և բրօշիւրները տալիս են ընկերութեան գործակալները կայսրութեան բոլոր քաղաքներում։ (ամս. 10, 25) 8—20

ԲԱԳՈՒ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Ա. Գ. ԲԱԲԱԼԵԱՆԻ

Ընդունվում են երեխաներ գիշերօթիկ, կէս-գիշերօթիկ և երթևեկ։ Ուսումնարանի և պանսիօնի նպատակն է պատրաստել երեխաներին միջնակարգ դպրոցներ մտնելու համար։ Հասցէն՝ Բագու, Հին-փոստի փողոց, տուն Հաջի-Նէյմաթի։ (ռ. ե. հ.) 10—10

ՎԱՃԱՌԱՀԱՆՎԵՑ ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ ՎՆԱՍՎԱԾ ՀԱՅԵՐԻՆ

ԵՐԿՐՈՐԴ, ՆՈՐԻՑ ՄՇԱԿՎԱԾ ԵՒ ԼՐԱՑՐԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳԻՆԸ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ, 3 Ր. 70 ԿՕՊԷԿ

2-ое вновь обработанное и дополненное изданіе

ЛИТЕРАТУРНО-НАУЧНАГО СБОРНИКА

„БРАТСКАЯ ПОМОЩЬ ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ".

Въ настоящее удешевленное изданіе, содержащее болѣе 140 статей разнообразнаго содержанія въ прозѣ и въ стихахъ, вошло болѣе 40 новыхъ, знакомящихъ съ одной стороны съ ужасающими бѣдствіями турецкихъ армянъ, а съ другой—съ бытовыми и культурными условіями жизни армянъ въ прошломъ и въ настоящемъ. Къ книгѣ приложены двѣ отдѣльныя большія группы (болѣе 100 человѣкъ) армянъ-переселенцевъ, снятыя съ натуры, а также болѣе 150 рисунковъ (40 новыхъ), въ томъ числѣ многіе въ цвѣтныхъ краскахъ и два: „Рѣзня армянъ въ Требизондѣ 1895 г." И. К. Айвазовскаго и „Весенняя буря" Магдесіана, въ три тона.

Цѣна 3 р., съ пересылкой 3 р. 70 к.

Складъ въ конторѣ *Русскихъ Вѣдомостей* и въ книжн. магаз. Карбасникова на Моховой.

NB. Лица, не окончившія счетовъ по 1-му изданію «Братской помощи», благоволятъ поспѣшить окончаніемъ таковыхъ.

Покорнѣйшая просьба къ изданіямъ, сочувствующимъ цѣли сборника, перепечатать настоящее объявленіе.

7—10 Завѣд. ред. Гр. Джаншіевъ.

Дозволено цензурою, Тифлисъ, 24 Сентября 1898 г. Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Меник. ул. № 13